գոհութիւն առ Վեհափառ Հայրապետն Տ. Տ. Գէորգ Դ. Կաթողիկոս ամենայն Հայոց, և ապա՝ շնորհաւորութիւն գալստեան Նորին Ս. Առաջնորդին, որպէս և զօրինակ Նորա ի սմա ծրարեմ՝ ի հրատարակումն։

«Ցաւարտ շնորհակալու թղթոյն յատեան խաղացեալ Նորին Սրբազնութեան՝ խօսեցաւ բանս ինչ սրտառուչս, թէպէտև հակիրճս, սակս երկարութեան ժամանակին ի տօթազին եղանակի քաղաքիս, այլ ազդու իմն իմաստիւք, նախ՝ ի դիմաց Հայրապետին, որ իբրև Հայր բազմագորով զմտաւ ածեալ հանապազ զամենայն զհոգևոր որդեակս իւր հարազատ, թէպէտ և կարի տարանջատս յինքենէ, տածեալ խնամէ և գթամանէ զամենեսեան, ոչ թողլով ի նոցանէ ի բաց առ ի ջամբել զսուրբ կաթն ուղղափառ վարդապետութեան Մօրս մեր լուսոյ Հայաստանեայց կաթողիկէ սրբոյ Էջմիածնի, և եթէ ոչ անձամբ՝ գէթ և ի պատկերի միոյ յեպիսկոպոսաց իւրոց եղանէ ի յայց ամենայն հօտի իւրում՝, և ի դէմս նոցին պատկերանայ իբրև նոյն ինքն առ ամենեսեան, և իբրև ի մօտոյ հայրագութ սիրով ընդ հովանաւ իւրով հովուէ և հանգուցանէ զնոսա. ապա կնքէ և զբան իւր՝ իւրով շնորհակալութեամբ, օրհնելով զամենեսեան և յանկուցանելով զսէր և զմակրութիւն ամենեցուն առ ինքն։

«Հուսկ յետոյ աւարտի ամենայն և արձակին ամենեքեան իբրև ի մետասաներորդ ժամու աւուրն իւրաքանչիւր ոք ի բնակութիւն իւր։

«Իսկ արդ պարապի Նորին Սրբազնութիւնն ի յայցելութիւն պատուական մեր աղնէից աստ, և ընդունի զընդունելութիւնս ի նոցանէ սիրաշրաւէր մեծարանօք, այցելու հանդիսանայ ի Մարդասիրական ճեմարանն Հայոց, ուր և ճառախօսութիւն լինի յաշակերտաց, քննէ զմանկունսն ի յընթերցանելիսն և ի շարադրուածսն, խրախուսէ և յորդորէ զնոսին յամենայնի փութաջան լինել ի յիմացական և ի բարոյական ուսմունս, լինել օրինաւոր անդամ ազգի և եկեղեցւոյ, հետամուտ լինի ի կառավարութիւնս հոգաբարձուաց, կազդուրէ և յորդորէ զնոսա յեւս առաւել եռանդն ժրութեան, և օրհնութեամբ շահէ զնոսին. այցելու նաև գտանի յայլ դպրոցս Լատինացւոց և Անգղիացւոց և ի տպարանս նոցին, եւս և եպիսկոպոսաց նոցա, և ընդունի ի նոցունց զյարգանս մեծարանաց ի շուք և ի պարծանս մեր և ազգի»։

Ա. Ծ. Կ-ՐՈՊԷ Մ-ՐՊ-ՐԵՆ Մ. Դ-ՐԵՆՑ

Ըստ արժան կհամարիմք ի նամակիս յիշատակեալ Պ. Թովմաս Մելքումեանի ի դիմաց Հայոց Կաղկաթայու ուղղագրած շնորհակալութեան և շնորհաւորութեան թուղթը ևս հրատարակել։

«Շնորհաբեր եկաւորութիւն ձեր ի մայրաքաղաքս Կալկաթայ, ո Աստուածնորհ սրբազան Հայր, ի տես եւ յայցելութիւն բանաւոր Հօտիս Ձերում՝, մերազնեայ հասարակութեանս բնակելոյ աստ, ապարէն մեծի իմն խնդութեան արժանի արար զմեզ զամենեսեանս. այն զի՝ զբազմաժամանակեայ հետէ զցանկալին զայն հոգւոյ՝ ի Հարց պատմեալ եւ արդ առ որդիս վճարեալ զ'Ի-երս Աստուծոյնորդ մեր տեսանեմք այսօր ակն յանդիման ընդ յարկաւ սրբոյ տաճարիս բազմեալ ի սեղան սրբութեան. որ զանմահ եւ զանմահարարն մատուցանէր զսուրբ պատարագ ի սրբութիւն եւ ի մխիթարութիւն հօտին իւրոյ. եւ ի միացումն հաղորդակցութեան զինուորեալ եկեղեցւոյս ի խորհրդական գլուխ Տէրն մեր Յիսուս Քրիստոս։

Յուշ ածեմք ամենեքեան աստանօր ի սիրտ եւ ի բարբառ զտէրունեանն սնարալի ձայն առ սիրելի աշակերտսն աւետարանեալ. թէ՝ յոր տուն մտանիցէք. առասջիք ողջոյն տանս այսմիկ. զոր բան աւասիկ հետեւաբար ի ձեզ եկեալ հասեալ վայելեմք այսօր բարեբաղդաբար. իբրեւ ի բերանոյ Հօր քաղցրաբարոյի լուեալ ի մտոյ ականջօք. եւ ի ձեռանէ Տեառնէն բարեխնամի առընկալեալ ընձանօք. համբուրիւ սրբոյ Օծութեան Ձերոյ փառաւորիմք։

Եւ իցէ. իցէ արդեօք առաւել ինչ արժանի բերկրանաց. քան երկնային որ վայելեցեալ շնորհաց եւ Աստուածապարգեւ օրհնութեան. որպիսի զարդիս ի ժամուս վայելեմք մեք ի նոյն ի ձեզ զաւանդ սիրոյ եւ շնորհաց Աստուածայինն օրհնութեան. ի բանն թէ «Հանգիցէ ողջոյնն ձեր ի վերայ նոցա»։ Մեք ահա՝ որդիք ձեր հոգեկանք. մեք ահա՝ եւ հարազատ սերունդք Մօրն մեր լուսոյ Հայաստանեայց Կաթողիկէ սրբոյ Էջմիածնի։

Հապա եւ մեք նախ զառաջինն այսօր. ո դերասիճանեալ Հայր. միակամ եւ միաբան հաճութեամբ նուիրեմք զանկեղծ սիրոյ գոհունակութիւնս առ Վեհափառ Հայրապետն ամենայն Հայոց Տէր Գէորգ Դ. Ժայրագոյն Պատրիարգ եւ Կաթողիկոս Աղթարատեան Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի. որ քաղցր ակնարկութեամբ իւրով բարեհաճեցաւ առաքել առ մեզ զՀովիւդ բարեխնամ ի յայցել մեզ եւ ի մխիթարել զմեզ ըստ հոգւոյ։

Հուսկ ասպ եւ յարդակոն սիրով շնորհաւորեմք այսօր զցանկալի գալուստս Ձեր ի յայցելութիւն մերում հասարակութեան։ Խաղաղութիւն է մուտ ձեր. խաղաղասէրդ եկեղեցւոյ Տեառն բարձրելոյ. ահա Հօտ ձեր ցանկալի. ահա ժողովուրդ ձեր կազմեալ. վայելեսջիք արդ ուրեմն ի սէր հարազատաց հոգեւոր որդւոց. եւ ցօղեսջիք ի գլուխ զցող շնորհաց օրհնութեան ձերոյ։ Եւ ձեզ ահա ժամ բարեպատեհ. ո հոգեւոր Հայր. ընդ առատաղեղ օրհնութեան ձերոյ՝ յանկուցանել ի ձեզ զսիրտս եւ զհամակրութիւն սերտ սիրոյ ոսկին այսոցիկ հոգեծին որդւոց Հայաստանեայց սուրբ Եկեղեցւոյ ի խոկմունս հոգենպաստ խորհրդոց ի փառս տաճարին Աստուծոյ եւ ի պարծանս ազգի։

Կեցցէ ուրեմն հոգեւոր Հայրդ մեր. կեցցէ եւ բարեխնամ Հովիւդ մեր ընդ բանաւոր հօտի ձերում՝ ի ծոց Մօրս մերոյ Հայաստանեայցս եկեղեցւոյ անսասան ընդ յամայր ամ ամենայն աջողուածով բարեաց. ի յառաջնորդել անսայթաք ի ձեզ յանձնեալ հօտն Քրիստոսի։

Հաճեսջիք արդ՝ ո սրբազան Հայր. զայս թուղթ մեր դուդնաբերայ թէպէտ. այլ անկեղծ սիրոյ եւ հաւատարմութեան պատուական Հայ հասարակութեան քաղաքիս՝ ընդունել ի հաճոյս. զոր հաճութեամբ յարդելի աւանդապահաց եւ գործակցաց պաշտօնակցաց իմոց. խորին ակնածութեամբ եւ մեծարանօք ահա ձեզ մատուցանեմ ի դիմաց ամենեցուն։

Ձերոյ՝ Բ-ՐԻՐ ԱԲ-ՐԵՆ Ա. Ծ.

(Կնիք եւ ստորագրութիւն).

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ Ի ՎԱՂԱՐՇԱՊԱՏ.